

Ժողովուրդ

15 ապրիլի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

46
(3255)

Ք. Երևան, Արուսյան 22ա/3 (0010)

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՎԱՐԿՈՎ ԱՌՈՂՋԱՊԱՐՈՒԹՅՈՒՆ



Իշխանությունը խոսում է առողջության համապարփակ ապահովագրությունից ու բուժման ֆինանսական բեռի թեթևացումից, բայց համակարգի ներդրման հիմքում դրվել է «102,000,000 եվրո արժողությամբ վարկ»: Առողջապահության նախարարությունը «Ժողովուրդ» օրաթերթին պաշտոնապես պարզաբանել է, որ ծրագիրը պետք է «սկզբնական առողջապահական ծառայություններից օգտվելու ֆինանսական խոչընդոտները», սակայն նույն պատասխանում նշվում է, որ միջոցները «կուղղվեն պետական բյուջե եւ ոչ անմիջապես առողջապահության նախարարություն»:

Այսինքն՝ հանրությանը ներկայացվում է լայն սոցիալական բարեփոխում, բայց դեռ պարզ չէ՝ վարկային գումարի որքան մասն է գնալու հենց ապահովագրությանը, ինչքան է արդեն մասհանվել եւ ինչ ծախսերի է ուղղվել:

«Ժողովուրդ» օրաթերթի հետաքննության մեջ բացահայտվել են առողջապահական ապահովագրության խոստման տակ թաքնված թվերը, վարկային պարտավորություններն ու անպատասխան մնացած հարցերը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Արթուր Զովակիմյանը Տավուշի մարզպետի տեղակալի պաշտոնը զբաղեցնում է 2020 թվականի հոկտեմբերի 29-ից: Մինչ այդ նա երկար տարիներ ծառայել է ուժային կառույցներում: «Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրեց փոխմարզպետի տարբեր տարիների հայտարարագրերը՝ պարզելու համար, թե ինչպես է փոփոխվել Զովակիմյանի ունեցվածքը պաշտոնի նշանակվելուց ի վեր: «Ժողովուրդ» օրաթերթի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ 2025 թվականին Զովակիմյանը հայտարարագրել է 5 անշարժ գույք: Փոխմարզպետը հայտարարագրել է երկու տրանսպորտային միջոց՝ GAZ 1963 թ.՝ ձեռք բերված 23/02/2024, UAZ՝ ձեռք բերված 17/04/2013: 2025 թվականին Զովակիմյանի բանկային հաշիվներում առկա է եղել 3,142,179 դրամ, կանխիկ դրամը՝ 8,000,000 դրամ: Նրա տարեկան եկամուտը կազմել է 15,224,810 դրամ, որից 13,052,810 դրամը՝ աշխատավարձ, 2,172,000 դրամը՝ կենսաթոշակ:




Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Երեկ հայտնի դարձավ, որ «Հայաստան» դաշինքի ընտրական ցուցակի հերթական թեկնածուն Գագիկ Համբարձումյանն է: Առավոտյան Համբարձումյանը երդվեց ԱԺ ամբիոնից: ArmLur.am-ը ուսումնասիրեց, թե ով է ԱԺ նոր անդամը: Գագիկ Համբարձումյանը ծնվել է 1955 թվականի հունվարի 30-ին Երևանում: Նա ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: ArmLur.am-ը պարզեց, որ Համբարձումյանը երկար տարիներ զբաղեցրել է տարբեր պաշտոններ իրավապահ համակարգում: Իր աշխատանքային գործունեությունը սկսել է դեռ 1978 թվականից՝ որպես Շահումյանի ՆԳ բաժնի քննիչ, ապա շարունակել Երևանի ՆԳ վարչությունում: Ավելի ուշ նա աշխատել է ՀԽՍՀ ՆԳ նախարարության քննչական համակարգում որպես ավագ քննիչ եւ կարելորագույն գործերով քննիչ:



⇒ էջ 3

Գործարար Աշոտ Արսենյանից «Ժողովուրդ» օրաթերթը հետաքննություն է անցրել, թե ինչ է կատարվում «Ջերմուկ Գրուպ» ընկերության շուրջ: «Հորդորում են խնայել սեփական ջանքերն ու թողնել հայկական ամենաեղիակավոր բրենդի վրա ցեխ շարտելու խոհուկ փորձերը: Մշուշոտ ենթադրությունների ետեւում պարզ նշմարվում են ոմանց ականջները», -արձագանքելով վերջին հրապարակումներին՝ ասաց Աշոտ Արսենյանը: Հիշեցնենք, որ ընկերության իրավաբանական բաժինը տարածել է հետեւյալ հայտարարությունը. «Քրեական գործի հարուցման պահից մինչ օրս քննչական մարմինների կողմից որեւէ պահանջ (կամ կասկած) չի արտահայտվել հանքային ջուր «Ջերմուկ» արտադրողի նկատմամբ: «Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ-ի որեւէ աշխատակից չի ներգրավվել քրեական գործում որպես կասկածյալ կամ մեղադրյալ, մեղադրանքներ չեն առաջադրվել, ինչը վկայում է այն մասին, որ քննչական մարմինների կողմից որեւէ պահանջ կամ կասկած չկա «Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ-ի կամ նրա աշխատակիցների նկատմամբ...»:



Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՄԱՐԶԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԻՐԱՆԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼ Է ԻՐ ՆՊԱՏԱԿԸ

Ռուսաստանը եւ Իրանը մտադիր են զարգացնել համագործակցությունը եւ առեւտրաշրջանառությունը հասցնել 30 միլիարդ դոլարի: Այս մասին Թեհրանի Նահանգապետ Մոհամմադ Սադեղ Մոթամեդյանը հայտարարել է IRNA-ին տված հարցազրույցում Ռուսաստանի դեսպան Ալեքսեյ Դեդուլին հետ հանդիպումից հետո:

«Երկու կողմերն էլ հաստատել են իրենց մտադրությունը՝ զարգացնել համագործակցությունը՝ օգտագործելով առկա հնարավորությունները 30 միլիարդ դոլարի առեւտրաշրջանառություն ապահովելու համար», - ասել է նա:

Նահանգապետի խոսքով՝ Թեհրանը կարելի էր կխաղա այս գործընթացում: Մոթամեդյանը նշել է, որ Նահանգը հանձնառու է ընդլայնել համագործակցությունը Մոսկվայի հետ եւ ներկայումս աշխատում է հետագա համագործակցության ճանապարհային քարտեզի վրա:

ԱՅՑԵԼԵԼ Է ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՄՐԱՐ



ԱՄՆ գործերի ժամանակավոր հավատարմատար Դեյվիդ Ալենն այցելեց Հայաստանի ազգային պատկերասրահի ծանոթանալու հայկական եւ միջազգային գեղանկարչության հարուստ հավաքածուներին:

Նա դիտարկեց պատկերասրահի հայկական հավաքածուն, որտեղ տեղ են գտել մեծանուն նկարիչների, այդ թվում՝ Սարյանի, Այվազովսկու եւ Սուրենյանցի կտավները, ապա շրջեց որմանակարների սրահում ծանոթանալով հայկական գեղանկարչության եւ պատկերային արտահայտչամիջոցների զարգացման ուղուն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Արդշինբանկ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարություն

«Արդշինբանկ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը գումարվելու է 2026 թվականի ապրիլի 29-ին՝ ժ. 10:00-ին, ք. Երեւան՝ Գրիգոր Լուսավորչի 13 հասցեում:

ՆՈՐ ՄԱՐՏԱՅՐՈՎԿԵՐ

ԱՇԽԱՐՀԻ ԳԱՎԱԹՆ ՈՒ ՔԱՇԱՅԻՆ ԿԱՐԳԵՐԸ

Հայաստանի բռնցքամարտի հավաքականը երեսնամյա վերջին մարզումներն է անցկացնում քաղաքական Ֆոս դու Իգուասու քաղաքում ապրիլի 20-26-ը կայանալիք Աշխարհի գավաթի առաջին փուլից առաջ:

Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ Ռուդիկ Մկրտչյանը լրագրողների հետ զրույցում նշել է, որ մրցաշարին սկսել են պատրաստվել Ծաղկաձորում, որտեղ հիմնականում ուշադրություն են դարձրել ընդհանուր եւ ֆիզիկական վիճակին, իսկ վերջին փուլում աշխատել են տեխնիկատարիկական որակների վրա:

«Աշխարհի գավաթը 3 փուլից է բաղկացած, Բրազիլիայում հաջող հանդես գալուց հետո բռնցքամարտիկները 1/8 եզրափակիչները կանցկացնեն Չինաստանում, իսկ եզրափակիչ փուլը կընդունի Տաշքենդը: Գավաթին լավ ենք պատրաստվել, բայց որքանով, բնականաբար ցույց կտա ռինգը: Եւ կանայք, եւ տղամարդիկ լավ հանդես գալու համար ջանք ու եռանդ չեն խնայել», - նշել է մարզիչը:

Մկրտչյանի խոսքով՝ իրենց առաջնային նպատակը սեպտեմբերին կայանալիք Եվրոպայի առաջնությանը հաջող մասնակցելն է: Հիմա նախ բռնցքամարտիկները պետք է հարմարվեն քաշային կարգերին, որոնք 13-ից դարձել են 10-ը: «Մի քանի մրցաշարերի մասնակցելու հետո նոր կկարողանան հաստատվել նոր քաշային կարգերում: Նաեւ դա էր պատճառը, որ այդքան էլ լավ չմասնակցեցինք Ստրանջայի մրցաշարում, բացի այդ էլ Հայաստանի առաջնությունից ընդամենը մեկ շաբաթ էր



անցել, հավաք ու մարզումներ չէինք հասցրել ունենալ», - ավելացրել է նա:

Աշխարհի գավաթին մասնակցելու են Անուշ Գրիգորյանը (51 կգ), Էլիզա Քոչարյանը (65 կգ), Ռուդոլֆ Գարբոյանը

(50 կգ), Ժիրայր Սարգսյանը (55 կգ), Արթուր Բազեյանը (60 կգ), Արթուր Սահակյանը (65 կգ), Արարատ Հարությունյանը (70 կգ), Նարեկ Մանասյանը (90 կգ) եւ Դավիթ Չալոյանը (+90 կգ):

ԼՈՒՐԵՐ

ԱՆՑԵԼ Է ՀՈՐՄՈՒՋԻ ՆԵՂՈՒՑՈՎ



ԱՄՆ պատժամիջոցների տակ գտնվող չինական Rich Starry տանկերը անցել է Հորմուզի նեղուցով՝ չնայած ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի կողմից հայտարարված շրջափակմանը, հաղորդում է Telegram Mash ալիքը:

Չինական Shanghai Xuanrun Shipping Co. Ltd. ընկերությանը պատկանող նավը պատժամիջոցների է ենթարկվել Իրանի հետ համագործակցելու համար: Հեռուստաալիքի տվյալներով՝ տանկերն առաջինն է մտել Հորմուզի նեղուց եւ դուրս եկել Պարսից ծոցից այն բանից հետո, երբ ԱՄՆ-ն փակել է երթուղին: Այն տեղափոխում է մոտավորապես 250 000 բարել մեթանոլ եւ չինացի անձնակազմ:

Mash-ի տվյալներով՝ պատժամիջոցների տակ գտնվող մեկ այլ նավ՝ Murlikishan-ը,

որը նախկինում տեղափոխում էր ռուսական եւ իրանական նավթ, այժմ գտնվում է նեղուցի ճանապարհին: Սպասվում է, որ տանկերը ապրիլի 16-ին կանգ կառնի Իրաքում վառելիքով լիցքավորվելու համար:

ՄՊԱՌԵԼ Է ՀՐԹԻՌՆԵՐԻ ՊԱՇԱՐՆԵՐԸ

ԱՄՆ-ը սպառել է նորագույն բարձր ճշգրտության PrSM բալիստիկ հրթիռների իր պաշարները Իրանի դեմ իրականացված ռազմական գործողությունների ընթացքում: Aviation Week-ի փոխանցմամբ՝ այս մասին հայտնել է ԱՄՆ զինված ուժերի ներկայացուցիչ Ջիմի Արտերը:

Նրա խոսքով՝ Իրանի դեմ պատերազմի սկզբնական փուլում տեղակայված հրետանային ստորաբաժանումը լիովին օգտագործել է PrSM հրթիռների առկա պաշարը, սակայն մոտ ժամանակում նախատեսվում է դրա համալրում: Նշվում է, որ այս հրթիռները առաջին անգամ կիրառվել են իրական մարտական պայմաններում հենց այդ գործողության ընթացքում:

PrSM համակարգը մշակվել է՝ փոխարինելու հնացող ATACMS հրթիռներին եւ ունի ավելի մեծ հեռահարություն ու ճշգրտություն: Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ Վաշինգտոնի եւ Թեհրանի միջեւ բանակցությունները շարունակվում են նաեւ ԱՄՆ պատվիրակության Պակիստանից հեռանալուց հետո՝ Իսլամաբադի միջնորդությամբ:

ԿՐԱԿ Է ԲԱՅԵԼ ԳՊՐՈՑՈՒՄ



Թուրքիայի Շանլուրֆայի Նահանգի Սիվերեթ քաղաքում մասնագիտական թեքնոլոգիայի դպրոցում հրաձգության հետեւանքով առնվազն 16 մարդ է վիրավորվել: Ըստ պաշտոնական տեղեկությունների՝ հարձակվողը 18-ամյա նախկին աշակերտ է եղել, որը որսորդական հրացանով կրակ է բացել դպրոցի տարածքում: Նա որոշ ժամանակ անց թաքնվել է շենքում եւ, ոստիկանության միջամտությունից հետո, ինքնասպանություն է գործել: Նահանգապետ Հասան Շիլդաքի տվյալներով՝ տուժածների թվում են 10 աշակերտ, 4 ուսուցիչ, բուժֆետի աշխատակից եւ մեկ ոստիկան: Վիրավորների մի մասը գտնվում է ծանր վիճակում եւ տեղափոխվել է Նահանգային հիվանդանոց: Դեպքի դրդապատճառները դեռ պարզված չեն: Իրավապահները հայտարարել են, որ իրականացվում է լայնածավալ հետաքննություն:

«ժողովորդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:



ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ո՞վ կարող է աշխատել որդես ուսուցիչ:

Լուսի Գինոսյան, 29 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի՝ ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որն ստացել է բարձրագույն կրթությամբ մանկավարժական համապատասխան որակավորում կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին 10 տարվա ընթացքում տվյալ առարկայի մանկավարժական (կամ ուսուցչական) կամ գիտամանկավարժական գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ: Առնվազն մեկ անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները բավարարող անձով չհամալրվելու դեպքում ուսուցչի տվյալ թափուր տեղի համար հայտարարված հաջորդ մրցույթին կարող է դիմել նաև՝

1) տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող և տվյալ մասնագիտական կրթական ծրագրով կամ առանձին մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով մանկավարժահոգեբանական և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առնվազն 30 կրեդիտ հավաքած անձը:

2) բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա (ԲՏՃՄ) առարկաների մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող անձը աշխատանքի ընդունվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով առնվազն 30 կրեդիտ հավաքելու պայմանով: Անհրաժեշտ կրեդիտներ չհավաքելու դեպքում աշխատանքի ընդունվելուց մեկ տարի հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ուսուցչի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվում է:

3) ուսուցչի որակավորում շնորհող բարձրագույն ուսումնական հաստատության առնվազն բակալավրի կրթական ծրագրով ուսումնառող ավարտական կուրսի ուսանողը՝ գյուղական բնակավայրի ուսումնական հաստատությունում աշխատելու նպատակով, որի համար աշխատանքային պայմանագրով նախատեսված ժամանակահատվածը կհաշվարկվի որպես աշխատանքային ստաժ:

4) «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջով մասնագիտական գործունեությունը դադարեցված և կամավոր ատեստավորում անցած անձը:

ՀՀ ԿԳՄՍ

«ԺՈՂՈՎՈՐԳ»- 1-ին և 2-րդ կետերով սահմանված դասընթացը կարող է կազմակերպել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կազմակերպությունը կամ բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կրթական ծրագրով (մոդուլով):

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Հեաբրիբի է իմանալ, թե ովքեր են երբ կարող են անվճար այցելել թանգարաններ:

Դավիթ Ալեքսանյան, 65 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 11.04.2023 թ. N 492-Ա/2 հրամանի՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայության թանգարաններ մշտական ցուցադրության անվճար այցելության արտոնություն է սահմանված հետևյալ խմբերի համար՝ Հայաստան ժամանած պետական պաշտոնական պատվիրակությունների անդամների, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցիչների, Թանգարանների միջազգային խորհրդի անդամների (ԻԿՕՍ) համար,

թանգարանային աշխատողների, երկկողմանի ծնողագուրկ 12 տարեկանից բարձր տարիքի երեխաների, հատուկ խնամքի և կենցաղային սպասարկման կարիք ունեցող ծերերի,

Երկրորդ համաշխարհային պատերազմի մասնակիցների (Հայաստանի Հանրապետության և նախկին ԽՍՀՄ պետությունների),

հաշմանդամություն ունեցող՝ 1-ին խմբի (ուղեկցողի հետ), հաշմանդամություն ունեցող՝ 2-րդ և 3-րդ խմբերի (առանց ուղեկցողի),

աղքատության (ընտանեկան) նպաստի համակարգում ընդգրկված նպաստառուների, բազմազավակ ընտանիքների 12 տարեկանից բարձր երեխաների,

ժամկետային զինծառայողների, Հայաստանի Հանրապետության սահմանամերձ շրջանների 12 տարեկանից բարձր դպրոցական տարիքի երեխաների (նախօրոք ներկայացված հայտերի հիման վրա),

լրագրողների՝ աշխատանքային բոլոր օրերին (անձը և կարգավիճակը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում):

ՀՀ ԿԳՄՍ

«ԺՈՂՈՎՈՐԳ»- Նշենք նաև, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթ օրը թանգարանների մուտքն ազատ է:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսակարդ՝ shamshyan.com-h



Հրդեհ կայանված Ford (Pickup) մեքենայում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել



«Հայփոստ» ՊՓԲԸ հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ հեռ. 52-53-01

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), և մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ

հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային ե/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Table with 2 columns: Region and Weather Forecast (e.g., Ծիրակ -5 - 10, +6 + 10)

Table with 2 columns: Region and Weather Forecast (e.g., Արարատ 0 + 3, +11 + 14)

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03U089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 14.04.2026
Տպաքանակ՝ 3968

Գլխավոր խմբագիր՝ ԶՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը: «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: